# ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/18.8/26697-2023 «02» 08 2023թ.

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(*Հասցե՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7*)

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար համակարգչի ձեռքբերման նպատակով՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն վարչապետի աշխատակազմի և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 11.11.2022թ. կնքվել է «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/15-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո վարչապետի աշխատակազմի և Ընկերության միջև 14.02.2023թ. կնքվել է համաձայնագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն) պարտավորվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված համակարգիչը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 80-րդ օրը, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, ուստի վարչապետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է 10.11.2022թ. Ընկերության հետ կնքված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/15-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/15-2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ

Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ